

3. Խոնարհում:

Խոնարհում կը ծագի 1. Դեմ, 2. Բեմ, 3. Ժամանակ, 4. Եղանակ ցուցնող մասնիկներու կամ գրերու բայի մը արմատին վրայ գալով միանալովը:

Խոնարհման բազմապատիկ ձեւերն երկու գլխաւոր դասու կը բաժնենք, — ԽՕՍ-ՔԻ ՉԵԻԵԻ կամ ԳԻՄԱՆՈՐ ԲԱՅ (դեմ-բեմ ԵՖ-ու), եւ Բ. ԱՆՈՒՆԱԿԱՆ ՉԵԻԵԻ կամ ԳԻՄԱՆՈՐ ԲԱՅ որ կը բովանդակէ Աներեւոյթն (Մարտի 20-է), Ընդունելութիւնն (Կոթի ֆոնէլ) եւ Անցեալը (Կոթի Գեղ-ու):

Ա. ԳԻՄԱՆՈՐ ԲԱՅ:

Հոս տեսնենք միայն առ Հասարակ բայերու 1. Ժամանակներն եւ 2. Եղանակը, որ առանձինն կարեւորութիւն ունին գիտնալու:

1. Բայերու ժամանակներուն վրայ շորս գլխաւոր բան կայ դիտնալու. Ա. Չափը կամ Բեմ ու Տեւուլը. Բ. Նշանակութիւնը. Գ. Կարգ-մասնակցութիւնը:

Տաճկերէնի ժամանակները տասնուհինգ են թուով, որոնք երկու կարգ կը բաժնուին. 1. Գլխաւոր ժամանակք. 2. Պատմական ժամանակք.

1. Գլխաւոր ժամանակներն առ Հասարակ կը նշանակեն թէ գործողութիւն մը ներկայի մէջ կը կատարուի, կատարուած է, պիտի կատարուի:

2. Իսկ պատմական ժամանակները կը ցուցնեն որ գործողութիւն մը անցեալ ժամանակի մէջ կը կատարուէր, կատարուած էր, եւ պիտի կատարուէր. եւ այս՝ անձին գիտութեան կամ միայն ուրիշ վկայութեան վրայ Հաստատուած կ'ըսուի. ուստի կրկին կը զանազանին. 1. Բուն-պատմական ժամանակք, որ կը յայտնեն թէ անձին գիտութեամբ կը խօսուի, եւ 2. Վիպական ժամանակք, որ կը նշանակեն թէ ուրիշ վկայութեան վրայ Հիմնեալ կ'ըսուի: Այս երեք գլխաւոր ժամանակներն ալ ունին իրենց երկրորդական ժամանակներն, որ են՝

ա. Անցեալ որոշեալ (Մակէի Ընդ-արի), «Էմբի» որ կը ցուցնէ թէ անձին գիտութեամբ կը խօսուի, կամ թէ եղած բան մը դեռ Հիմայ կ'իմացուի:

բ. Անցեալ անորոշ (Մակէի Եւթի), «Էմբի» որ կը ցուցնէ թէ օտարին վկայութեամբ կը խօսուի:

գ. Անորոշ-ներկայ (Մակէի Եւթի), «Էմբի» որ անեզր ներկայի կամ անցեալի մը մէջ տեւող կամ ապագայի մէջ ըլլալու գործողութիւն մը կը յայտնէ:

դ. Ներկայ (Կալ), «Էմբի» որ կը ցուցնէ թէ գործողութիւնը դեռ կը շարունակուի եւ կամ թէ Հիմակ ըլլալու վրայ է:

ե. Ապագան (Էմբի-Եւթի), «Էմբի» որ կը ցուցնէ թէ գործողութիւնն ապագայ ժամանակ մը, ետքը պիտի ըլլայ:

Բնականապէս կ'իմացուի որ վեպական անցեալ որոշեալ պիտի լուսնայ:

2. Ինքնին յայտ է՝ թէ գործողութեան մը Հետ կապուած է կերպ մ'ալ, որով գործողութիւնը խօսողէն կը բացատրուի՝ Հաստատութիւն, ուստի Մասնական եղանակը. դիտելով, բազմալով եւ այլն, ուստի Մտորդասականը. Հարկ մը դնելով, ուստի Հարկագրականը. Հրամայելով, պատուիրելով, ուստի Հրամայականը. եւ վերջապէս պայ-